ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2023 թվականի ընթացքում վարչության կողմից համապատասխան աշխատանքներ են իրականացվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, պետական կառավարման համակարգի մարմինների ու վերջիններիս տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների միջև համագործակցության և փոխհամաձայնեցված գործողությունների ապահովման ուղղությամբ։

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- Հաշվետու ժամանակահատվածում հրավիրվել և անցկացվել է մարզի խորհրդի թվով 3 նիստ (02.05.2023թ.,11.07.2023թ. և 15.11.2023թ.)։ Նիստերի ընթացքում ներկայացվել են մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների կողմից համապատասխան բնագավառներում իրականացված աշխատանքները, քննարկվել են մարզի համայնքների բնականոն գործունեության կազմակերպմանը վերաբերող մի շարք հարցեր, ներկայացվել են տեղական ինքնակառավարմանը և պետական կառավարմանը վերաբերող օրենսդրական փոփոխությունները, հայտարարություններով հանդես են եկել պետական կառավարման մարմինների մարզային ստորաբաժանումների ղեկավարները։ Վարչության կողմից պատշաճ կարգով իրականացվել են մարզի խորհրդի նիստերի հրավիրման հետ կապված կազմակերպչական հարցերն ու նիստերի արձանագրումը։
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2022 թվականի նոյեմբերի 30-ի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական և մասնագիտական հսկողության 2023 թվականի աշխատանքային ծրագիրը հաստատելու մասին» թիվ 3245-Ա հրամանի համաձայն մարզի թվով 2 համայնքներից **Գյումրի համայնքում (Արթիկ համայնքում իրականացվելու է դեկտեմբեր ամսվա ընթացքում)** և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 27-ի N ԳՍ//32935-2023 համաձայնությամբ **Ամասիա համայնքում** իրականացվել են տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողություն:

Իրավական հսկողության արդյունքները քննարկվել են համայնքների ավագանիների նիստերում, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումները և դրանց վերացման ուղղությամբ արված առաջարկությունները համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունվել են ամբողջությամբ, իսկ հսկողություն իրականացրած պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ համայնքների ղեկավարների կողմից առարկություններ չեն ներկայացվել:

Իրավական հսկողության իրականացման ընթացքում անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրվել տեղական ինքնակառավարման մարմիններին՝ իրենց լիազորությունների իրականացման հարցերի վերաբերյալ:

- Ներկայում գործող օրենսդրությամբ առաջնահերթ է համարվում համայնքներում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները, հատկապես այն ոլորտներում, որտեղ դրանց կիրառումն առավել արդյունավետ է ժամանակային ծախսերի կրճատման, կառավարման

թափանցիկության ու վերահսկելիության ավելացման առումով: Այդ նպատակով ապահովվել է մարզի համայնքներում ներդրված համայնքային կառավարման տեղեկատվական համակարգերի անխափան շահագործումն ու ՀՀ պետական կառավարման մարմիններում գործող «Mulberry» համակարգի հետ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, ինչպես նաև մարզի համայնքներում համացանցային պաշտոնական կայքերի անխափան շահագործումը:

Մարզպետի աշխատակազմի պաշտոնական համացանցային կայքի և ԶԼՄ-ների միջոցով համայնքներին իրազեկվել են տեղական ինքնակառավարման ոլորտին առնչվող իրավական ակտերի, դրանցում կատարվող փոփոխությունների ու լրացումների մասին:

Հաշվի առնելով տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության և ընթացիկ բարեփոխումների վերաբերյալ հանրային ուշադրությունը, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների կողմից պարբերաբար իրականացվող մշտադիտարկումների առկայությունը, միջոցներ են ձեռնարկվել մարզի բոլոր 6 համայնքներում՝ ավագանու նիստերի կամ հանրային նշանակության այլ միջոցառումների առցանց հեռարձակումներն անխափան իրականացնելու, ինչպես նաև համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ապահովելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրելու ուղղությամբ:

Մարզի համայնքապետարանների պաշտոնական համացանցային կայքերի մշտական հասանելիությունն ու դրանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված բովանդակությամբ համալրումն ապահովելու համար, պարբերաբար իրականացվել են մշտադիտարկումներ և արդյունքները երկամսյա կտրվածքով ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ

ՀՀ կառավարության 2022 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 1903-Ն որոշմամբ վաղաժամկետ դադարեցվել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանու լիազորությունները և նշանակվել են համայնքի ավագանու արտահերթ ընտրություններ: ՀՀ վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 1461-Ա որոշումով նշանակվել է Անի համայնքի ղեկավարի պաշտոնակատար:

2023 թվականի մարտի 26-ին Անի համայնքում համամասնական ընտրակարգով անցկացվել են ավագանու արտահերթ ընտրություններ:

Վարչության կողմից անհրաժեշտ աշխատանքներ են տարվել օրենսդրությամբ ընտրական գործընթացներում մարզպետին և համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացումն ապահովելու ուղղությամբ: Ընտրությունների ժամանակացույցով նախատեսված բոլոր աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամկետներում:

Վարչության կողմից մեթոդական և խորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել Անի համայնքին՝ համայնքի ավագանու գործունեության կազմակերպման, նոր աշխատակազմի ձևավորման, բյուջեի նախագծի կազմման և ավագանու հաստատմանը ներկայացման, համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի և պաշտոնների անձնագրերի կազմման,

բնակավայրերում մատուցվող ծառայությունների բնականոն և շարունակական ընթացքի ապահովման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ, ԿԱԴՐԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ ԳՍ/15.4/12289-հանձնարարությամբ, «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հետ համատեղ 2023 թվականի հունիսի 6-8-ը ներառյալ կազմակերպվել և իրականացվել է մարզի տեղական ինքնակառավարման մարմինների թվով 20 ներկայացուցիչների (3 համայնքի ղեկավար և 17 ավագանու անդամ) վերապատրաստման գործընթացը:

Վերապատրաստման արդյունքների վերաբերյալ սահմանված կարգով և ժամկետում համապատասխան տեղեկատվություն է ներկայացվել (գրություն՝ N02.1//05657-2023, 16.06.2023թ.) ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մեկ այլ՝ 2023 թվականի ապրիլի 28-ի թիվ ԳՍ/15.4/12276-2023 հանձնարարությամբ հավաքագրվել և «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ին է ներկայացվել (գրություն՝ N 02.1//04690-2023, 18.05.2023թ.) ՀՀ Շիրակի մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 2023 թվականին վերապատրաստման ենթակա, ինչպես նաև 2021-2022 թվականներին միավորված համայնքներում մրցութային եղանակով համայնքային ծառայության պաշտոններում նշանակված և վերապատրաստում չանցած համայնքային ծառայողների ցուցակները:

Պլան-գրաֆիկով նախատեսված 2 խմբերում ընդգրկված՝ վերապատրաստման ենթակա համայնքային ծառայողների հերթական վերապատրաստման գործընթացն իրականացվել է «Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի հետ համատեղ՝ 2023 թվականի նոյեմբերի 13-ից 23-ը, Գյումրի և Արթիկ համայնքներում (72-ժամյա ծրագրով): Ընդհանուր հաշվով, 2023 թվականին վերապատրաստվել են մարզի թվով 5 համայնքների 40 համայնքային ծառայողներ:

Մարզպետի աշխատակազմի և տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ աշխատանքի արդյունքում 2023 թվականի ընթացքում համայնքային ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի թվով 4 (Գյումրի, Արթիկ, Աշոցք և Ամասիա) համայնքներում անցկացվել են համայնքային ծառայության թվով 32 թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:

Ապահովվել է մրցույթների անցկացման անխափան ընթացքը, հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Մշտապես հետևողականություն է հանդես բերվել, որպեսզի մրցույթների հայտարարությունները տեղադրվեն ՀՀ հրապարակային ծանուցումների www.azdarar.am կայքում, համայնքապետարանների և մարզպետի աշխատակազմի պաշտոնական համացանցային կայքերում, փակցվեն համայնքապետարանների տեղեկատվական ցուցատախտակներին, տեղադրվեն համայնքների և մարզպետի աշխատակազմի ֆեյսբուքյան պաշտոնական էջերում, ինչպես նաև միջոցներ են ձեռնարկվել մրցույթները օրենսդրության պահանջներին համապատասխան անցկացնելու ուղղությամբ:

Հայտարարված 32 մրցույթներից կայացել են 20-ը, իսկ 12-ը (Արթիկ 2, Ամասիա 9, Աշոցք 1) չեն կայացել՝ դիմողներ չլինելու պատճառով: Կայացած մրցույթների արդյունքում հաղթող է ճանաչվել 20 քաղաքացի, որոնք սահմանված կարգով նշանակվել են համապատասխան պաշտոններում:

Մարզի Գյումրի, Արթիկ և Ամասիա համայնքներում կազմակերպվել և անցկացվել են նաև համայնքային ենթակայության թվով 11 կազմակերպությունների տնօրենների թափուր պաշտոնների համալրման համար հայտարարված մրցույթներ:

ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի, ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների ու պետական կառավարման մարմինների տարածքային ստորաբաժանումների միջև համագործակցված աշխատանքների կազմակերպման ուղղությամբ, որի արդյունքում ապահովվել է պաշտպանության, արտակարգ իրավիճակների, ոստիկանության և ազգային անվտանգության բնագավառներում օրենսդրությամբ պահանջվող աշխատանքների կատարումը:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

2023 թվականի ընթացքում մարզում արձանագրվել է **2261** արտակարգ դեպք (2022թ. նույն ժամանակահատվածում՝ **1207**): Նախորդ տարվա համեմատությամբ դեպքերն աճել են **1054**-ով (87,3%):

Մարզում տեղի ունեցած արտակարգ դեպքերի վերաբերյալ վարչությունը մշտապես տեղեկատվություն է ստանում մարզային ճգնաժամային կառավարման կենտրոնից **(911)**: Բոլոր այն դեպքերի վերաբերյալ տեղեկատվությունները, որոնց հետևանքների վերացմանը անմիջական մասնակցություն կարող են ունենալ մարզպետի աշխատակազմը, մարզային ենթակայության կազմակերպությունները կամ մարզի տեղական ինքնակառավարման մարմինները, անմիջապես փոխանցվում են մարզպետին:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

➢ **ՀՀ Շիրակի մարզպետի** աշխատակազմի, ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման, ՀՀ ՆԳՆ ոստիկանության Շիրակի մարզային վարչության, ՀՀ ՊՆ Շիրակի կայազորի ռազմական ոստիկանության և ՀՀ Շիրակի մարզի տեղական ինքնակառավարման մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում ապահովվել են **2022 թվականի ձմեռային և 2023 թվականի ամառային** զորակոչերի կազմակերպման ու անցկացման աշխատանքները: 2022 թվականի ձմեռային և 2023 թվականի ամառային զորակոչերի շրջանակներում, 2022 թվականի դեկտեմբերի 26-ին, 2023 թվականի հունվարի 31-ին, հուլիսի 3-ին 25-ին և 27-ին, անցկացվել են ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստեր, քննարկվել են տարկետման ներկայացված թվով 214 զորակոչիկների անձնական գործեր:

Ելնելով քննարկման արդյունքներից կազմվել են համապատասխանաբար պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետում տալու և պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատելու վերաբերյալ եզրակացություններ:

ՀՀ Շիրակի մարզային զորակոչային հանձնաժողովի նիստերի ընթացքում կազմված եզրակացությունները սահմանված կարգով ու ժամկետներում ուղարկվել են ՀՀ պաշտպանության նախարարություն (31.01.2023թ.,N 01//00770-2023, 03.07.2023թ., N 01//06132-2023, 26.07.2023թ., N 01//06815-2023, 27.07.2023թ., N 01//06881-2023):

Մինչև մարզային զորակոչային հանձնաժողովի նիստի հրավիրումը, ՀՀ մարզպետի աշխատակազմի ՏԿ և ՏԻՀ վարչության համապատասխան աշխատակիցների կողմից մանրակրկիտ ձևով ուսումնասիրվել են բոլոր զորակոչիկների անձնական գործերը, հայնաբերված թերությունները նախապես քննարկվել է Զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանման պատասխանատուների հետ և մինչև նիստերի անցկացումը դրանք վերացվել ու համապատասխանեցվել են ոլորտի օրենսդրության պահանջներին:

Իրավասու մարմինների համագործակցված աշխատանքների արդյունքում 2022 թվականի ձմեռային զորակոչի առաջադրանքը կատարվել է **102,6%,** իսկ 2023 թվականի ամառային զորակոչի առաջադրանքը՝ **103.9%:**

Մշտապես ապահովվել է զորակոչիկներին ՀՀ պաշտպանության նախարարության զորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Շիրակի մարզի տարածքային ստորաբաժանումից դեպի հանրապետական հավաքակայան ուղարկման պլան-գրաֆիկների տրամադրումը ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչությանը և վերջիններիս կողմից զորակոչիկների ուղեկցումը:

- Համապատասխան հսկողություն է սահմանվել մարզային և համայնքային ենթակայության կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնողների և ծառայության կազմակերպման ուղղությամբ:

Ներկայում մարզային ենթակայության թվով 2 և համայնքային ենթակայության 2 կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայություն են անցնում թվով 6 քաղաքացի:

- Իրականացվել են զոհված և վիրավոր զինծառայողների հարազատների ընդունելության, օպերատիվ լուծումներ պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ ցուցաբերվել է անհրաժեշտ խորհրդատվություն:
- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի օգոստոսի 24-ի թիվ ԳՍ/15.3/25832-2023 հանձնարարականով՝ ՀՀ զինված ուժերը պայմանագրային զինծառայողներով համալրելու, ինչպես նաև կանանց նորաստեղծ գումարտակում զինվորական ծառայության անցնելու վերաբերյալ իրազեկման աշխատանքների պլան-ժամանակացույցին համապատասխան՝ ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչների, ՏԿ և ՏԻՀ վարչության պետի և մասնագետների մասնակցությամբ համայնքներում կազմակերպվել են իրազեկման աշխատանքներ, հանդիպումներին ներգրավվել են ինչպես համայնքների վարչական ղեկավարները և համայնքապետարանների աշխատակիցները, այնպես էլ շահառու անձինք,

մասնավորապես՝ մինչև 35 տարեկան կանայք և մինչև 45 տարեկան տղամարդիկ, ովքեր հետաքրքրված էին ՀՀ զինված ուժերում ծառայությունով:

- Վարչության կողմից կազմակերպվել և 2023 թվականի մարտի 29-ին անցկացվել է 2022թ. սեպտեմբերի 13-ին սկսված ռազմական գործողությունների հետևանքով զոհված զինծառայողների հետմահու պարգևատրման արարողությունը:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ

- Կազմվել և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն է ներկայացվել (N 01//10089-2022, 09.12.2022թ.) ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2023 թվականի ուսումնական տարում ՀՀ Շիրակի մարզի ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման պլանը:
- ՀՀ Շիրակի մարզում բնակչության պաշտպանության, հնարավոր արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների վերացման, պատասխանատու կազմակերպությունների միջև փոխհամագործակցված աշխատանքների ապահովման նպատակով մշակվել են ՀՀ Շիրակի մարզպետի մի շարք որոշումների նախագծեր, մասնավորապես՝

«Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանը հաստատելու մասին» 2022 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 712-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2023 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների մասին» 2023 թվականի մարտի 10-ի թիվ 57-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում շտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին» 2023 թվականի ապրիլի 6-ի թիվ 105-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում հրամանատարաշտաբային ուսումնավարժություն անցկացնելու մասին» 2023 թվականի ապրիլի 25-ի թիվ 135-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի ջրային տարածքներում ջրահեղձման դեպքերի կանխարգելման մասին» 2021 թվականի հունիսի 1-ի թիվ 204-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն անցկացնելու մասին» 2023 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 394-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2021 թվականի սեպտեմբերի 9-ի N 260-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» 2023 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 380-Ա,

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզում ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական իրավիճակի մշտական հսկողության համակարգում ընդգրկված կազմակերպությունների միջև ճառագայթային, քիմիական ու մանրէաբանական բնույթի արտակարգ իրավիճակների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգը եվ փոխանակվող տեղեկատվության տեսակների ցանկը հաստատելու եվ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2018 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 324-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2023 թվականի նոյեմբերի 29-ի թիվ 507-Ա,

Լրամշակվել և համապատասխան համաձայնեցումներից հետո 2023 թվականի սեպտեմբերի 26-ին Շիրակի մարզպետի հաստատմանն է ներկայացվել Շիրակի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանի նախագիծը:

- Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով մարզում անցկացվել են շտաբային և ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, որոնց կազմակերպչական աշխատանքների իրականացման գործում ակտիվ ներգրավվածություն են ունեցել վարչության աշխատակիցները:
- 2023 թվականի ընթացքում կազմակերպվել է քաղաքացիական պաշտպանության Շիրակի մարզային ծառայությունների պետերի և շտաբների պետերի հրամանատարական պատրաստության թվով 3 պարապմունք՝ Փրկարար ծառայության Շիրակի մարզային փրկարարական վարչության մասնագետների մասնակցությամբ:
- Արտակարգ իրավիճակներում ՀՀ Շիրակի մարզի բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ ՀՀ Շիրակի մարզպետի որոշումներով մարզում անցկացվել են նախատեսված բոլոր՝ թվով 35 շտաբային, 2 հրամանատարաշտաբային և 2 ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժությունները:
- Մի շարք ուսումնական հաստատություններում անցկացվել են «Պատսպարման կազմակերպումը «Օդային տագնապ» ազդանշանի դեպքում», «ԱԻՆ գործառույթները և խնդիրները բնակչության պաշտպանության բնագավառում» թեմաներով հատուկ տակտիկական ուսումնավարժություններ, քաղաքացիական պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ ուսումնական հաստատություններում կազմակերպվել և անցկացվել են դասախոսություններ ու վարժանքներ: Պլանով նախատեսված միջոցառումները ՀՀ Շիրակի մարզում իրականացվել են ամբողջությամբ:
- Գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելմանը և դրանց հետևանքների նվազեցմանն ուղղված աշխատանքների վերլուծման և ամփոփման նպատակով, համապատասխան համայնքապետարաններից շաբաթական պարբերականությամբ հավաքագրվել են անհրաժեշտ տեղեկատվություններ և ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ու ՓԾ Շիրակի մարզային փրկարարական վարչություն:

Պարբերական այցելություններ են եղել համայնքներ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի տարածքում 2023 թվականի գարնանային հնարավոր հեղեղումների կանխարգելման, հետևանքների նվազեցման և վերացման միջոցառումների» ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման հսկողությունն իրականացնելու նպատակով:

Արդյունքում՝ մարզի 6 համայնքի թվով 47 բնակավայրերում իրականացվել են ծրագրով նախատեսված սելավատարների մաքրման աշխատանքներ: Ընդամենը մարզում մաքրվել է 13209 մ երկարությամբ սելավատար և թվով 482 դիտահոր:

- Կարևորելով քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության միջոցառումներում բնակչության ազդարարումը՝ մարզի համայնքներում կազմակերպվել և սարքին վիճակի են բերվել չաշխատող 3 էլեկտրաշչակները:

Ընդհանուր առմամբ մարզի համայնքներում և բնակավայրերում Շիրակի մարզին անհրաժեշտ թվով 160 էլեկտրաշչակներից ներկա դրությամբ առկա է աշխատանքային վիճակում գտնվող թվով 68 էլեկտրաշչակ:

- Համապատասխան աջակցություն է ցուցաբերվել մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների, համայնքային ենթակայության կազմակերպությունների կողմից քաղաքացիական պաշտպանության պլանների և պլան-ժամանակացույցերի մշակման և լրամշակված տարբերակները ՇՄՓՎ համաձայնեցման ներկայացնելու հարցում:

Հետևողական աշխատանք է տարվել մարզի համայնքների և ուսումնական հաստատությունների ԱՌԿ պլանների ճշգրտման և լրամշակման աշխատանքները ժամանակին իրականացնելու և Շիրակի ՄՓՎ համաձայնեցմանը ներկայացնելու ուղղությամբ:

Մեր առաջարկությամբ համայնքների ղեկավարների կողմից աջակցություն է ցուցաբերվել Շիրակի ՄՓՎ ենթակա ստորաբաժանումների անձնակազմերին՝ համայնքներում առկա նկուղների ուսումնասիրություններն իրականացնելու ընթացքում:

- Համայնքներում հրդեհների դեպքերը կանխելու նպատակով մարզի համայնքների ղեկավարներին պարբերաբար առաջարկվել է հրդեհավտանգ ժամանակահատվածում իրականացնել պարտադիր իրազեկման աշխատանքներ, ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ, խստորեն վերահսկել խոտածածկ տարածքներում հակահրդեհային կանոնների պահպանումը:

Վարչության աշխատակիցներն ընդգրկվել են 2023 թվականին մարզում տեղի ունեցած բնական աղետների (կարկտահարություն, ցրտահարություն, երաշտ) պատճառով տուժած համայնքներում վնասների գնահատումն իրականացնող աշխատանքային խմբերում:

Պարբերաբար կատարվել են նաև ոլորտին վերաբերող այլ տեղեկատվությունների հավաքագրման, մշակման ու ՀՀ վարչապետի աշխատակազմ, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն և այլ պետական մարմիններ ներկայացնելու աշխատանքներ:

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ ոստիկանության Շիրակի մարզային վարչության և ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության Շիրակի մարզի գումարտակի հետ համագործակցված աշխատանքի արդյունքում պատշաճ կարգով ապահովվել է մարզում անցկացված մի շարք հանրային միջոցառումների ժամանակ հասարակական կարգի պահպանությունը և ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը:

Մարզային նշանակության տարբեր հարցերի վերաբերյալ ոստիկանության համապատասխան աշխատակիցների հետ տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ ու քննարկումներ:

2022 թվականի համամատությամբ 2023 թվականին արձանագրվել է հացագործությունների թվի աճ (բոլոր թվերը ՏԿ և ՏԻՀ վարչությունում առկա են):

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԵՎ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՏԵՂԱՓՈԽՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և մարզում բնակվող արցախցիների վերաբերյալ վարչության կողմից իրականացվում է ամենօրյա հաշվառում և համայնքապետարաններից ստացված տվյալները ներառվում են ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից կազմված առցանց հարթակում:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ ԳՍ/20.1/32383-2023 հանձնարարությամբ յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը տեղեկատվություն է ներկայացվում նախարարություն՝ Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված անձանց տրամադրված հումանիտար օգնության վերաբերյալ:

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի մեկ այլ՝ 2023 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ ԳՍ/20.2/32949-2023 հանձնարարությամբ յուրաքանչյուր շաբաթվա վերջին աշխատանքային օրը տեղեկատվություն է ներկայացվում նախարարություն՝ ՀՀ Շիրակի մարզ տեղափոխված և պետական ու համայնքային սեփականություն հանդիսացող տարածքներում բնակվող արցախցիների տեղաշարժի վերաբերյալ:

Վարչության 2 աշխատակից ընդգրկվել են ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղարի հրամանով ստեղծված պատասխանատու ստորաբաժանման կազմում, պարբերաբար այցելել են Գյումրի համայնքում գործող այն հյուրանոցներ և հյուրատներ, որտեղ ժամանակավորապես բնակվել են արցախցիներ: Այցելությունների արդյունքների վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ և փաստաթղթային փաթեթներ:

ՀՀ Շիրակի մարզի համայնքների ղեկավարների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում համայնքներից ստացվել են 2023 թվականի սեպտեմբերի 20-ից Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և ՀՀ Շիրակի մարզում բնակություն հաստատած ընտանիքների վերաբերյալ հաշվառման թերթիկները և ապահովվել է դրանցում նշված անձնական տվյալների մուտքագրումը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության առցանց տեղեկատվական համակարգ:

Բռնի տեղահանված և ՀՀ Շիրակի մարզ տեղափոխված բոլոր այն քաղաքացիներին, ովքեր դիմել են ՏԿ և ՏԻՀ վարչություն, տրամադրվել է անհրաժեշտ խորհրդատվություն, բազմաթիվ ընտանիքների ցուցաբերվել է աջակցություն մարզի համայնքներում բնակելի տներ և կացարաններ գտնելու, մի շարք կենցաղային հարցեր լուծելու հարցում: Ներկայում ևս շարունակվում է Արցախից բռնի տեղահանվածների՝ տարբեր հարցերով այցելությունները ՏԿ և ՏԻՀ վարչություն:

ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔԵՐ

Վարչության աշխատակիցները ընդգրկվել են համապատասխան հանձնարարականների համաձայն մարզպետի աշխատակազմում ստեղծված աշխատանքային խմբերում, մասնավորապես.

-Հանրապետությունում աշնանացան ցորենի արտադրության խթանման 2023 թվականի պետական աջակցության» ծրագրի ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսություններում և առևտրային կազմակերպություններում առկա գյուղատնտեսական կենդանիների հաշվառման աշխատանքները սահմանված ժամկետում կատարելուն աջակցելու նպատակներով ստեղծված աշխատանքային խումբ.

- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմում ակտիվների և պարտավորությունների գույքագրում անցկացնելու նպատակով ստեղծված գույքագրման հանձնաժողով.

- Արթիկ, Ախուրյան, Անի և Աշոցք համայնքներում առկա հիմնախնդիրների գույքագրմանն աջակցելու, դրանք ըստ առաջնահերթության դասակարգելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբեր.

- ՀՀ Շիրակի մարզի Անի համայնքի սեփականությունը հանդիսացող գույքի, փաստաթղթերի և այլ միջոցների հանձնման-ընդունման գործընթացի ընթացքի և արդյունքների վերաբերյալ կազմված փաստաթղթերի ուսումնասիրության նպատակով ստեղծված աշխատանքային խումբ:

-ՀՀ կառավարության կողմից իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի վերաբերյալ մարզի բնակավայրերում իրազեկման աշխատանքների նպատակով ստեղծված աշխատանքային խումբ.

Վարչության մասնագետներն ընդգրկված են եղել նաև մարզի համայնքներում 2023 թվականի ընթացքում իրականացված իրավական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերի կազմերում: Արդյունքում ի հայտ եկած թերությունների վերացման ուղղությամբ համապատասխան առաջարկություններ են ներկայացվել համայնքների ղեկավարներին և հետևողական մոտեցում է ցուցաբերվել արձանագրված թերությունների վերացման աշխատանքները հավուր պատշաճի իրականացնելու ուղղությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են տարաբնույթ հանձնարարականների ու գրությունների քննարկման, ամփոփման և արդյունքների վերաբերյալ պատասխան գրությունների նախապատրաստման աշխատանքներ՝ սահմանված ժամկետներում:

Ապահովվել է նաև **գաղտնի գործավարությամբ** սահմանված ընթացակարգով մի շարք հանձնարարականների կատարումը:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՏԿ ԵՎ ՏԻՀ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԱՄ ԱՆՏՈՆՅԱՆ